Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մրցույթ՝ <<Երևանի հ. 108 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի « Երաժշտություն» / 24 դասաժամ/, «Ռուսաց լեզու»/ 19 դասաժամ/, «Քիմիա» /6 դասաժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում են առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- Դիմում (Ձև 1) մեկ լուսանկար՝ 3x4 չափս
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձև 5)
- Այլ պետությունների քաղաքացիները ՀՀ աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
- Հրատարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են 2023թ-ի նոյեմբերի 3-ից մինչև նոյեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը , բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքնային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ. նոյեմբերի 21-ին՝ ժամը 13:00-ին ,** <<Երևանի հ. 108 միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ում :
E - mail : school108@schools.am
Հասցեն՝ Սիլիկյան թաղամաս փողոց 10:
Տեղեկությունների համար զանգահարել՝ 010336100 հեռախոսահամարով: